ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 Երևան, Վազգեն Սարգսյան 3/8, հեռ. 594-015
էլ. փոստ armen.gevorgyan@justice.am

№ 10/23/13648-16

«26» 10 2016թ.

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ Լ. ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր՝ 2016 թվականի հոկտեմբերի 24-ի RWUB-2KND-C11R թվակիր հարցման՝ հայտնում ենք, որ.

1. Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ. հունվարի 26-ի թիվ 62-Ն որոշման՝ ՀՀ արդարադատության նախարարության հաստիքացուցակով սահմանված է 3 (երեք) խորհրդականի և 2 (երկու) օգնականի հաստիքային միավոր: Համապատասխանաբար՝ ՀՀ արդարադատության նախարարն ունի 3 (երեք) խորհրդական և 2 (երկու) օգնական:

2. Նախարարի բոլոր խորհրդականները և օգնականներն աշխատում են վճարովի հիմունքներով:

3. Յուրաքանչյուր խորհրդականի աշխատավարձը կազմում է 363770 ՀՀ դրամ *(առանց հարկումների)*, իսկ օգնականներինը՝ 297630 ՀՀ դրամ *(առանց հարկումների)*:

Միաժամանակ հայտնում ենք նաև, որ ՀՀ արդարադատության նախարարությունում հասարակական հիմունքներով աշխատող նախարարի խորհրդական և օգնական չկա:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Կատարող՝ Հայկ Բարսեղյան
ՀՀ ԱՆ աշխատակազմի տեղեկատվության և
հասարակայնության հետ կապերի վարչություն
Հեռ.՝ 59 40 60